Հայ աղջիկ

Ռափայել Պատկանյան

Դու տեսե՞լ ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ թե կանանչ տերևի մեջ
Կարմիր ծիրան փայլելիս։

Դու տեսե՞լ ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փրթրթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար
Չորս բոլորքը պար բռնած։

Բայց լուսինը խիստ խավար է,
Հայ աղջրկա առաջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար
Չարժեն նորա մեկ պաչին։

Երկու թըշին վարդ են նստել,
Ճերմակ ճակտին՝ մեկ շուշան.
Ժպիտը բերնից ցած չի գալիս,—
Անմեղության է նըշան։

Տե՛ս, նա առավ կարմըրելով
Իր ընկերից դահիրան,
Դրըմդըրմբեցուց փափուկ մատով

Ու ըսկսեց լեզգինկան։

Նազուք մեջքը ծառի նըման
Տատանում է գեղեցիկ.
Մեկ թրռչում է նա անգուման,
Մեկ գընում է խիստ հեզիկ։

Հալվում է խեղճ կըտրիճների
Սիրտը՝ նորան տեսնելով,
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացավ խիստ շուտով։